#1
ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԿԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
2017

@RightNgo Right Side NGO +37411880770 rightsidehumanrights rightsidengo@gmail.com

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Հարգելի ընթերցող
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը լինելով Հայաստանի հանրապետության առաջին և միակ տրանս կազմակերպությունը,որը հիմնադրվել է տրանս անձանց կողմից՝ տրանս անձանց համար
կարևորում է բարձրաձայնել համայնքի կարիքները,տեղական և միջազգային կառույցներում և դրանց լուծում տալ
Թերևս այս ամիսների ընթացքում «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ենթարկվեց բազմաթիվ ճնշումների և հարձակումների , սակայն համայնքը միասնական է հանուն իր իրավունքների և ՀԿ-ի կայացմանը,հզորացմանը,առաջխաղացմանը և միասնականությանը:
Այս դժվարին ժամանակաշրջանում մեր կողքին էին կանգնած միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ,ինչպիսիք են՝ European Endowment For Democracy,Frontline Defenders և Alliance for Public Health
Մենք հայտնում ենք մեր երախտագիտությունը միջազգային հանրությանը այս դժվարին պահին անգնահատելի աջակցություն ցուցաբերելու համար:
Մենք ձգտում ենք լավագույնս տրամադրել աջակցություն և ծառայություններ Հայաստանում տրանս ԼԳԲԻՔ համայնքին՝ մշակել և իրականացնել նոր ծրագրեր մեր նոր համայնքային կենտրոնում :
Մեր դռները բաց են 12:00-ից 20:00-ը:
Հարգանքներով՝ Լիլիթ Մարտիրոսյան

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

REUTERS ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԱՅՑԸ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հոկտեմբեր ամսին հանրահայտ Reuters պարբերականը անրադարձավ, Հայաստանում տրանս համայնքի խնդիրներին: Լրագրող Աննա Պույոլն այցելեց «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային կենտրոնը , որպեսզի ծանոթանա Հայաստանում տրանս համայնքին, նրանց հիմնահարցերին, և բարձրացնի աշխհարում, Հայաստանի տրանս համայնքի տեսանելիությունը: Նա զրուցեց «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի հետ, տրանս համայնքի ներկայացուցիչների հետ, ծանոթացավ նրանց խնդիրներին, իրազեկվեց Հայաստանում տրանսոֆոբիայի մասին, և այլ շատ կարևոր հարցերի մասին:
«Հայաստանի Հանրապետությունը մտնում է այն երկրների ցանկի մեջ, որոնց բնակչության կշռող մեծամասնությունը հոմոֆոբ և տրանսֆոբ են: Լիլիթ Մարտիրոսյանը իր փորձից ելնելով և ցանկանալով փոխել իրավիճակը Հայաստանում հիմնեց 2016 թվականի Հունվարի 25ին «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը : Այստեղ Տրանս համայնքը իրեն կարող է զգալ ազատ և անվտանգ: Բացի այդ ամենից կազմակերպությունը ընձեռում է բազում հնարավորություններ զարգանալու և աշխատում է շատ ու շատ ծրագրերի վրա: Տրանս մարդիկ անգամ ունեն դիմահարդարում և կար ու ձև սովորելու,որպեսզի այդ ոլորտում կարողանան աշխատանք գտնել»:
Ասել է Աննա Պույոլը:
Տեսահոլովակի հղումը կից `

https://youtu.be/TjuGyW_QgDo

THOMSON REUTERS®

ԴԻՄԱՀԱՐԴԱՐՄԱՆ ԵՒ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ



«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը սեպտեմբերի 20ից սկսած մեկնարկեց դիմահարդարման և կար ու ձևի դասընթացները իր համայնքային կենտրոնում:
Ծրագիրը տեղի չէր ունենա առանց European Endowment for Democracy կազմակերպության աջակցությամբ :
Դասընթացները վարում են հմուտ մասնագետներ Ագնես Բլոուն և Մոնիկա Սարկիսյանը :
Նրանք կիսվել են իրենց կարծիքներով կապված այս ծրագրի և իրենց սեփական կարծիքների մասին :

«Ես այստեղ անցկացնում եմ կար ու ձևի դասընթացներ : Ես շատ ուրախ եմ , քանի որ ունեմ հնարավորություն օգնելու Տրանս համայնքին այս արհեստում հմտանալու հարցում :
Մեր երկրում Տրանս մարդիկ խտրականացված են այն աստիճանի , որ անգամ չունեն հնարավորություն աշխատելու և այդ իսկ պատճառով ես շատ եմ կարևորում իմ ներկայությունը այս ծրագրում և կփորձեմ անել առավելագույնը լավ արդյունքների հասնելու համար : Ես շատ մեծ հաճույքով եմ աշխատում թե՛ իմ կոլեգաների , թե՛ իմ աշակերտների հետ:
Կարծում եմ , որ Տրանս համայնքին այս ծրագիրը բացի նրանից , որ կընձեռի հնարավորություն աշխատանք գտնելու , նաև առհասարակ կտա հմտություններ այս արհեստում» , –

Կիսվեց Ագնես Բլոուն

«Ես Մոնիկան եմ և ես «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային կենտրոնում անցկացնում եմ դիմահարդարման դասընթացները: Ինքս այս արհեստում սկսել եմ,որպես ինքնուս,քանի որ ինձ շատ էր դուր գալիս դիմահարդարման արվեստը: Շատ ուրախ եմ նաև այն հնարավորության համար , որ կարող եմ կիսվել իմ գիտելիքներով այս ոլորտում իմ համայնքի հետ , որի մի մասը նաև ես եմ կազմում :
Հայաստանում նորաձևության աշխարհը ունի շատ մեծ պահանջարկ և ես ունեմ այն ստույգ համոզմունքը , որ մեր համայնքը հմտանալով դիմահարդարման արվեստում կարող է ուշադրություն գրավվել տարբեր գործատուների շրջաններում : Հատկապես ունենալով վկայականներ , որ հմտացած են այս գործում , ինչը իհարկե համապատասխանելու է իրականությանը : Տրանսգենդեր անձը չունի տարրական աշխատելու իրավունք Հայաստանում , այդ իսկ պատճառով շատ Տրանս մարդիկ ստիպված սեքս աշխատանք են կատարում»:

Կիսվեց Մոնիկա Սարկիսյանը

Հոկտեմբերին տեղի է ունեցել շուրջ 4 դիմահարդարման և կար ու ձևի դասընթացներ

Դասընթացների նպատակ է սովորեցնել համայնքին դիմահարդարման և կար ու ձևի հմտությունները:
Դասընթացների ընթացքում «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը կկապնվի գործատուների հետ և կփորձի աշխատանքով ապահովվել մասնակիցներին: Մասնակիցներին կտրամադրվեն մասնագիտացման վկայականներ:
Սիրով հրավիրում ենք մասնակիցը դառնալու մեր դասընթացներին

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է ՆՈՐ ՀԱՍՑԵՈՒՄ ։

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը վերաբացեց իր համայնքային ապահով և ավելի բարելավված կենտրոնը նոր հասցեում:
Ինչպես հայտնի է հուլիսի 3-ին ժամը 18:30-ի սահմաններում Երևան քաղաքի ավագանու անդամ՝ Նաիրա Նահապետյանը ապօրինաբար մուտք գործելով «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն , կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանից պահանջել է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործունեության վերաբերյալ փաստաթղթեր: Մինչ Նահապետյանը Լիլիթ Մարտիրոսյանին սպառնում և պահանջում էր փաստաթղթեր, վերջինիս ամուսինը՝ Արա Աղաբաբյանը վեճի մեջ է մտնում կազմակերպության շահառուների հետ և ծեծի ենթարկում շահառուներից մեկին, որի արդյունքում կոտրվում է շահառուի ձախ ձեռքի մատը:

Բացի այս ամենից Նաիրան նաև պահանջել էր,որ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գրասենյակը տեղափոխվի , պատճառաբանելով , որ գրասենյակը չունի օրինական գրանցում: Ն. Նահապետյանը անգամ սպառնացել է. «Եթե դուք ձեր փասափուսեն չհավաքեք և հեռանաք, ես գրասենյակը փակել կտամ»:

Այս ամենից ելնելով , կազմակերպությունը ստիպված եղավ տեղափոխել իր համայնքային կենտրոնն ու գրասենյակը ։

Կազմակերպության հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանն ասել է՝ ,

-«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նոր համայնքային կենտրոնն ու գրասենյակը հոկտեմբերի 20-ի դրությամբ տեղափոխվել է նոր վայր , որն ավելի բարելավված է և անվտանգ ։
Կազմակերպությունը հայտնում է իր երախտապարտությունը «Alliance for Public Health»,«European Endowment for Democracy»,«Frontline Defenders» կազմակերպություններին այս դժվարին շրջանում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն անգնահատելի աջակցություն ցուցաբերելու համար , նաև հայտում է իր մեծագույն շնորհակալությունը միջազգային հանրությանը՝ կազմակերպության կողքին սատարող մնալու համար ։

Հելլոուինի տոնը «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային կենտրոնում







«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության աշխատակից Մոնիկա Սարկիսյանը որոշեց զարմացնել համայնքին և անցկացնել դասընթաց Հելլոուինի տոնի կապակցությամբ։

«Ինձ համար այս տոնը ունի հատուկ խորհրդավորություն ։ Քանի որ դիմահարդարության արվեստը ինձ շատ հոգեհարազատ է,ես որոշեցի ուրախացնել մեր համայնքի ներկայացուցիչներին և այսպիսի մի արտահերթ դիահարդարման դասընթաց կազմակերպել , քանի որ ինքս իմ աշակերտներից ստանում էի խնդրանքներ և առաջարկներ այս տոնի կապակցությամբ։
Քանի որ մեր համայնքը միշտ էլ տարբերվում է իր կրեատիվ և յուրօրինակ մոտեցումով առհասարակ ամեն ինչին `ես մտածեցի , որ կարելի է միասին օգնել բոլոր մեր համայնքային կենտրոն այցելած մարդկանց իրենց հելոուինյան գրիմ սովորեցնելու հարցում։
Նաև պատրաստակամ էի ընդունել հենց տեղում գրիմ անելու պատվերներ»

Ասել է Մոնիկան



«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ծրագրերի և քաղաքականության ղեկավար Աշոտ Գևորգյանը կիսվում է ծրագրերի և կազմակերպության միջոցառումների մասին

«Միանշանակ շատ ուրախ եմ , որ կարող եմ կիսվել մեր ծրագրերի մասին:
Մեր ներկայիս գլխավոր և հիմնական ֆինանսավորող կազմակերպությունը հանդիսանում է **European Endowment For Democracy**-ն,որը եվրոպական ֆոնդ է և տրամադրում է ֆինանսական աջակցություն եվրոպական երկրների հարևան պետություններին , որոնց մեջ մտնում է նաև Հայաստանի Հանրապետությունը:
Ծրագրի շնորհիվ տվյալ պահին կարողանում ենք ապահովվել համայնքային կենտրոնի ֆինանսավորումը մեծամասամբ : Նաև այս ծրագրի շնորհիվ կարող ենք ունենալ այնպիսի աշխատակիցներ , ինչպիսիք են՝ ծրագրերի և քաղաքականության ղեկավարը ,
արտաքին կապերի և հաղորդակցության մասնագետը , կար ու ձևի և դիմահարդարման մասնագետներն ու հաշվապահը :
Մեր հիմնական ծրագիրը , որը չի սպառվել և շարունակվելու է մինչև մյուս տարվա վերջ,դա կար ու ձևի և դիմահարդարման դասընթացներն են , որոնք ինչպես նշեցի ֆինանսավորվում են **European Endowment For Democracy** կազմակերպության կողմից:
Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանում խարանի և խտրականության վերացմանը՝ նեղ մասնագիտական գիտելիքներ տրամադրելով համայնքին և պաշտպանել համայնքի իրավունքները :
Երկրորդ ծրագիրը,որը չի ավարտվել և շարունակվելու է մինչ հունվար – դա հետազոտությունն է,որը կապված է ատելության հողի վրա գենդեռային հիմքով բռնությունների փաստագրումն է, որը ֆինանսավորում է **ILGA EUROPE**-ը:
Մենք նաև ունենք նոր հաստատված ֆինանսավորում , որի պայմանագրերի կնքման փուլում ենք :Ծրագիրը ֆինանսավորվում է **ECOM** կազմակերպության կողմից , ըստ այդ ծրագրի նախատեսված է կատարել որակական հետազոտություն տրանս անձանց առողջապահական ծառայությունների հասանելիության և իրավապական պաշտպանվածության վերաբերյալ , ինչպես նաև մշակել կազմակերպության ստրատեգիական և ադվոկացիոն պլանը: Ծրագիրը կավարտվի մյուս տարի՝ Մարտ ամսվա վերջին : Մեր առաջին մեծ հանդիպումը տեղի կունենա դեկտեմբեր ամսին , երբ մենք կմեկնենք ստրատեգիական և ադվոկացիոն պլանավորման :
Նոյեմբերին մենք արդեն կունենանք երկու ֆոկուս խումբ,որը կիրականացվի ադվոկացիոն պլանավորման փորձագետի կողմից:
Որպես այդպիսին մենք սպասում ենք նաև ֆինանսավորման ևս մի քանի դոնոր կազմակերպություններից , ինչի մասին ես դեռ չեմ զրուցի,քանի որ համագործակցությունը դեռ գտնվում է պայմանագրեր կնքելու փուլում»

«Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան հասարակական կազմակերպության հոկտեմբեր ամսվա իրադարձությունները

Իրավաբանական խորհրդատվություն - 6
Վստահության ակումբ - 1
Դիմահարդարման դասընթացներ - 4
Դերձակության դասընթացներ - 4
Կինոդիտում - 1
Անվանափոխություններ - 2 անձ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մեր գործընկերներն են

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

ILGA EUROPE

URGENT ACTION FUND FOR WOMEN'S HUMAN RIGHTS

FRONT LINE DEFENDERS

ECOM

PLANETROMEO FOUNDATION

Alliance for Public Health

OPEN SOCIETY FOUNDATIONS

iglyo

HEINRICH BÖLL STIFTUNG SOUTH CAUCASUS

TGEU Transgender Europe